ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, Հեռ. /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

N Ե-01/463
13 ապրիլ 2021թ.

<<ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յիրիկյան,

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի 09.04.2021 թվականի թիվ 55/603քր./394-20 գրության մեջ նշվել է, որՋահանՅուրիկիԻսրայելյանինպատկանողՆոյեմբերյան համայնքի Ջուջևան գյուղի վարչական տարածքում գտնվող 11-056-0272-0002 ծածկագրում առկա 0,07 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարքի վրա, «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից կառուցվել է դաշտային տիպի հիմնական բջջային կայան, որով խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 14-րդ և 16-րդ հոդվածներով նախատեսված պահանջները՝ այն է, բջջային կապի նշանակության օբյեկտների համար հատկացված պահպանման և սպասարկման հողատարածքների կատեգորիան պետք է լինի էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հնարավորինս սեղմ ժամկետներում ձեռնարկել համապատասխան միջոցներ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու և օրենքով սահմանված կարգին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Կից ներկայացնում ենք ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնի 09.04.2021 թվականի թիվ 55/603քր./394-20 գրության պատճենը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Արմինե Ամիրաղյան**

Կատ. Գլխավոր մասնագետ
Ն. Գիշյան